

պարանքէն կ'իմանաս հնարուած գիւտին մեծութիւնը և ոյժը : Ս'էկ ոտքը առաջ դրած՝ քայլ մը առնելու կերպով , օրինակ է յառաջագիմութեան որ տպագրութեամբ կ'ըլլայ՝ երբոր աղէկի գործածուի : Արբոր կերպարանքին ծանրութեանը և քիչ մը նաև մադձոտութեանը նայելու ըլլաւ նէ , կարծես որ յայտնի կը տեսնես թէ ինչպէս յոգնեցուցեր է խելքը՝ ան սքանչելի գիւտը հնարելու համար , և թէ ինչպէս արդեօք մտմտութի մէջ ընկեր է ան սուր միտքը՝ երբոր գուշակներ է թէ այնչափ բարեաց հետ ո՛րչափ չարեաց ալ պատճառ պիտի ըլլայ օր մը ան գիւտը : Իսկ ձեռքի մագաղաթին վրայ եղած Մտուածաշնչին խօսքը՝ թէ ԼԻ ԵՂԵՒ ԼՈՅՍ , ինչպէս որ պէտք է նէ կը հասկըցընէ թէ տպագրութեան բուն վեհմ ու սրբազան նպատակը ինչ է . այսինքն մոլորութեան խաւարը փարատել , և մարդկանց առաջնորդել առ լոյսն ճշմարտութեան : Ս'էկ խօսքով , աս արձանին վրայ յայտնի կը տեսնուի ոչ միայն Կութեմպերկին հանձարը , և տպագրութե՞ գիւտին մեծութիւնը , այլ և Տ' Միտէին վարպետութիւնը և փիլիսոփայութիւնը : Արձանին պատուանդանը քառակուսի է , ու չորս կողմը բարձր քանդակով ձևացած են ան երևելի ու գրւխաւոր անձինքը որ աշխարհիս չորս մասին մէջ մասնաւոր կերպով տպագրութեան յառաջագիմութե՜ր պատճառ եղեր են : Այլ թէ որ մեր Աբգարին պատկերը կը պակսի ասոնց մէջ , մենք պէտք է համարինք թէ անոր համար է՝ վասն զի օր մը իր ազգը առանձին արձան մը պիտի կանգնէ իրեն :

Ինչո՞ւ մենք մեր ազգին մէջ եղած
տպագրութեան պատմութիւնը զատ
յօդուածով կր դնենք :

ՕԳՏԱԿԱՐ ԳԻՏԵՐ

Ա) Երաշտի գրեշնեցումն Վրացի Լահատի Դե-
բաւ Տաթեւըն իւրոյ :

ՍԵՏԱՂԷ գրիչ գործածեւել ճիւղա
սովորական բան մը եղած է ամէն
տեղ . վասն զի թէ մաքուր կը հանէ
գրերը, և թէ շատ կը դիմանայ . միայն
թէ գրելէդ ետքը թէ որ աղէկ մը չը
սրբես՝ շուտով կը ժանգոտի : Յայտնի
բան է որ աս ժանգը թանաքին մէջ
գտնուած թթու նիւթերէն առաջ
կուգայ . ուստի որպէս զի աս բանիս
առաջը առնուի՝ պէտք է կաղամարին
քովը աւազաման մը դնել՝ մէջը մանր
կապարէ գնտակներ լեցուած . մետա-
ղէ գրիչով գրելէն ետքը պէտք է անոր
մէջ խօթել գրիչն ու քիչ մը շարժել,
ու մէջը թողուլ . ինքիրմէ կը չորնայ
ու կը սրբուի :

ባይኑጥ ለጉዳዩ ስለሚገኝ ጥያቄ ለመረጋገጥ ሲሞክሩ፡

ՀԱՍՏԱՐԱԿ գաճը՝ առ, ու կրակի մէջ այնչափ տաքցու որ բոլոր մէջի ջրեղէն մասունքը բլլեն. յետոյ մէկէն պաղլեղով խառնած ջրի մէջ ձգէ։ Պաղ ջրին չափը պիտի ըլլայ 18 լիւրէ, ու պաղլեղը 1 լիւրէ։ Սեց ժամի չափ ասոր մէջ կենալէն ետքը հանէ ջրէն, ու բաց օդու մէջ դիր որ չորնայ. յետոյ նորէն փուռը դիր եփէ, ինչուան որ գաճը մոլթ կարմրու թիւն մը ունենայ։ Ետքը առ ծեծէ, մաղէ ու տակառներու մէջ կոխէ։

Լսիկայ գործածել ուզած տտենդայնչափ պիտի թրջես որ թարմ պանիրի կակղուծիւն ունենայ, և անտեղն ալոր կ'ուզես ասով ծեփել՝ առաջուց ջուր սրսկելով թրջէ, որպէս զի գաճիւն մէջի թացուծիւնը շուտ մը չծրծէ։ Լս գաճը գործածելու համար նոր գործիքներ հարկաւոր չեն, սովորական ծեփիչը՝ բաւական